



**Գործողությունը ֆինանսավորվում  
է Եվրոպական Միության կողմից**

**Եվրոպական Միությունը կլիմայի  
փոփոխության համար Արևելյան  
Գործընկերության երկրներում**

***ԵՄ կլիմայի համար***

***Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայի  
Հանրապետությունում, Ուկրաինայում***



*Empowered lives.  
Resilient nations.*

# ԵՄ կլիմայի համար

**Նպատակը՝** «ԵՄ կլիմայի համար» գործողությունը նպաստելու է կլիմայի մեղմմանը և հարմարվողականությանը, ինչպես նաև ցածր արտանետումներով և կլիմայի նկատմամբ դիմակայուն տնտեսության զարգացմանը Արևելյան գործընկերության երկրներում՝ Փարիզի համաձայնագրի համապատասխան: Այն օգնելու է Արևելյան գործընկերության երկրներին ցածր արտանետումներով և կլիմայի նկատմամբ դիմակայուն նպատակները ինտեգրել զարգացման քաղաքականության և պլանների մեջ, բարելավել և համախմբել կլիմայի քաղաքականությունը և օրենսդրական համապատասխանեցումը:

**Գործընկեր երկրները՝** Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա  
**Տևողությունը՝** 2019-2022թթ.

**Բյուջեն՝** 8,8 միլիոն եվրո (ԵՄ ներդրումը՝ 8 միլիոն եվրո)

**Իրականացնող գործընկեր՝** ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր (ՄԱՉԾ)

**Ընդհանուր ուղղվածությունը՝** Եվրոպական Հանձնաժողովի DG NEAR և DG Clima

**Գործողությունները բաժանվում են կլաստերների յոթ գերակա արդյունքների շուրջ.**

## 1. Փարիզի համաձայնագրի ներքո Ազգային մակարդակով սահմանված ներդրումների ԱՄՍՆ (ԱՄՍՆ) իրականացում և թարմացում

- ❖ Ուսումնական և գիտելիքի փոխանակման տարածաշրջանային սեմինարները ԱՄՍՆ-երի իրականացման և ՄԱԿ ԿՓՇԿ-ին հաշվետվողականության վերաբերյալ
- ❖ Աջակցություն ԱՄՍՆ-երի իրականացմանը Արևելյան Հարևանության առնվազն չորս երկրներում
- ❖ Հանրային իրազեկում ԱՄՍՆ-երի վերաբերյալ մասնավոր հատվածի, գիտական շրջանակների և համապատասխան այլ շահագրգիռ կողմերի համար

## 2. Ցածր արտանետումների զարգացման դարի կեսերի ռազմավարության (LEDS) մշակում

- ❖ Տարածաշրջանային ուսումնական սեմինարներ LEDS -ի մշակման գործընթացի վերաբերյալ
- ❖ Ազգային տեխնիկական կլոր սեղաններ՝ քննարկելու և սահմանելու LEDS -ի մշակման ազգային համակարգման մեխանիզմները
- ❖ Գեներային տեսակետից զգայուն, դարի կեսերի երկարաժամկետ LEDS -ների մշակումը Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում և Վրաստանում՝ ԱՄՍՆ-երի թիրախների հիման վրա

## 3. Ներքին արտանետումների չափումների, հաշվետվողականության և հսկողության (ՉՀՀ) կուռ շրջանակների ներդրում

- ❖ Տարածաշրջանային ուսումնական սեմինարներ ՉՀՀ (Ջերմոցային գազերի գույքագրման) համակարգերի վերաբերյալ՝ ՄԱԿ ԿՓՇԿ-ի պահանջների համաձայն և ԵՄ Էներգետիկ Միության Կառավարման կանոնակարգի հետ համահունչ
- ❖ Ուսումնական շրջագայություն՝ ԵՄ-ում ՉՀՀ (Ջերմոցային գազերի գույքագրում) համակարգին ծանոթանալու նպատակով
- ❖ ՉՀՀ գործող համակարգերի ուսումնասիրում շահառու երկրներում և առաջարկներ ազգային ՉՀՀ (Ջերմոցային գազերի գույքագրում) համակարգերի վերաբերյալ
- ❖ Ոլորտային նախարարությունների (այսինքն՝ Էներգետիկայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, գյուղատնտեսության, անտառտնտեսության) և համապատասխան այլ գերատեսչությունների տեխնիկական վարչությունների փորձագետների ՉՀՀ ուսուցում
- ❖ Ուսումնական կյուրեր մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի համար՝ կապված իրենց ներդրմանը Ջերմոցային գազերի ազգային գույքագրմանը

#### 4. Համապատասխանեցում երկկողմանի համաձայնագրերում ներառված ԵՄ նորմատիվային ակտերի և Կլիմայական գործողության մասին Էներգետիկ համայնքի համաձայնագրի հետ

- ❖ Սեմինարներ երկրներից յուրաքանչյուրում՝ ԵՄ համապատասխան նորմատիվային ակտերի վերաբերյալ
- ❖ Ազգային օրենսդրության և ֆինակալ քաղաքականության վերլուծություն, առաջարկների և պլանների մշակում օրենսդրական համապատասխանեցման համար ինչքանով դա նախատեսված է Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ Ասոցացման Համաձայնագրերում, Հայաստանի հետ ԵՄ համաձայնագրում, Բելառուսի և Ադրբեջանի հետ Գործընկերության գերակայություններում, ինչպես նաև Էներգետիկ համայնքի համապատասխան որոշումներում
- ❖ Ներդրումներ համապատասխան Ենթակումիտների հանդիպումներին, Հարթակի և Պանելի քննարկումներ, Էներգետիկ համայնքի հանդիպումներ և տեղեկատվության թարմացումներ DG NEAR-ին և ԵՄ համապատասխան պատվիրակություններին

#### 5. Կլիմայի նպատակաուղղումը ոլորտներում և ոլորտային ուղեցույցներում՝ Փարիզի Համաձայնագրի իրականացման նպատակով

- ❖ Մեկնարկային և ուսումնական սեմինար կլիմայի փոփոխությունը ոլորտային քաղաքականություններում ներառելու վերաբերյալ
- ❖ Յուրաքանչյուր երկիր մշակում է գեներային տեսակետից զգայուն առաջարկներ առնվազն երկու գերակա ոլորտի համար: Էներգետիկայի ոլորտը լինելու է ուժեղ գերակայություն սույն բաղադրիչի համար
- ❖ Որոշակի ոլորտներին վերաբերող երեք ենթատարածաշրջանային ուսումնական և գիտելիքի փոխանակման սեմինարներ և մի շարք ազգային խորհրդատվություններ և սեմինարներ
- ❖ Ոլորտային ուղեցույցներ Փարիզի համաձայնագրի իրականացման համար

#### 6. Կլիմայական ներդրում

- ❖ Կլիմայական ֆինանսների հետ կապված երկու տարածաշրջանային համաժողովներ՝ ներդրումների պլանավորման և կլիմայական ֆինանսավորման մոբիլիզացման վերաբերյալ
- ❖ Ուսուցում, խորհրդատվություններ և կարողությունների ստեղծում նախարարությունների համապատասխան աշխատակազմերի համար՝ բանկերի համար ընդունելի գերակա ծրագրերի խողովակաշարերի և ԿՓ միջազգային ֆինանսավորման գործիքների նպատակաուղման վերաբերյալ
- ❖ Տարածաշրջանային և ազգային սեմինարներ կլիմայական ֆինանսների շրջանակների վերաբերյալ, ներգրավելով ֆինանսների, Էկոնոմիկայի և պլանավորման նախարարություններին
- ❖ Ֆինանսների նախարարությունների հետ երկու ազգային պիլոտային ուսումնասիրություն գեներային տեսակետից պատասխանատու կլիմայական ֆինանսների շրջանակների վերաբերյալ, բյուջեների կլիմայական պիտակավորման և բյուջեների պլանավորման և հաշվետվողականության համակարգերում ԿՓ ցուցանիշների ինտեգրման վերաբերյալ

#### 7. Հարմարվողականության պլանավորում, հարմարվողականության պլանների ընդունում և, անհրաժեշտության դեպքում, մշակում

- ❖ Աջակցություն ազգային հարմարվողականության պլանավորմանը առնվազն 2 երկրում
- ❖ Ազգային և ոլորտային հարմարվողականության պլանների ընդունմանը հաջորդող գործողություններ և ոլորացում
- ❖ Երկրի մասշտաբով գիտելիքի փոխանակում հարմարվողականության պլանավորման մշակման, իրականացման և ՄԱԿ ԿՓՇԿ-ին հաշվետվողականության վերաբերյալ
- ❖ Սեմինարներ տեղական և կենտրոնական իշխանությունների մասնակցությամբ

## ԵՄ Կլիմայի համար

Կլիմայի փոփոխությունը առաջացել է որպես 21-րդ դարում մարդկության առջև ծառայած կարևորագույն հարցերից մեկը: Երկրների կողմից Փարիզի համաձայնագրով ստանձնած պարտավորությունները կամ Ազգային մակարդակով սահմանված ներդրումները (ԱՄՆ) ստեղծում են շրջանակ՝ կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության վերաբերյալ ազգային գործողությունը ուղղորդելու համար: Կլիմայական գործողության արագացումը պահանջում է համակարգային մակարդակի փոխակերպումներ՝ բարձրագույն մակարդակներում ղեկավարության և հասարակության բոլոր հատվածների զանազան կոալիցիաների աջակցությամբ:

«ԵՄ կլիմայի համար» օգնում է կառավարություններին ԵՄ Արևելյան գործընկերության վեց երկրներում՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Կրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա, միջոցներ ձեռնարկել կլիմայի փոփոխության դեմ: Այն օգնում է երկրներին իրականացնել Փարիզի համաձայնագիրը և բարելավել կլիմայական քաղաքականությունը և օրենսդրությունը: Այն հավակնում է սահմանափակել կլիմայի փոփոխության ազդեցությունը քաղաքացիների կյանքի վրա՝ նրանց դանձնելով վերջինիս նկատմամբ ավելի դիմակայուն:

Գործողության ծավալը սահմանվել է բոլոր գործընկեր երկրների համագործակցությամբ:

Գործողությունը հիմնվում է նախկին համագործակցության ծրագրերի կարևոր նվաճումների վրա, ինչպիսիք են ԵՄ Կլիմա Արևելք ծրագիրը, որը աջակցել է կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանը Հարևանության Արևելքում՝ ավարտվել է 2017թ.:

«ԵՄ կլիմայի համար» ծրագիրը հաշվի է առնում ուժեղացված համագործակցությունը, որը հաստատվել է 2017թ. նոյեմբերին կայացած ԵՄ Արևելյան գործընկերության գագաթաժողովին, որպես «2020թ.–ի համար 20 արդյունքներ»-ի մաս:

Գործողությունը իրականացվում է ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի կողմից:

Եվրոպական Հանձնաժողովը ապահովում է ընդհանուր ուղղությունը: Հետագա տեղեկատվության համար դիմել՝

[EU4Climate@undp.org](mailto:EU4Climate@undp.org)



#strongertogether